ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ ՆՈՐ ՏԵՍՈՒՉՆԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 օգոստոսի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում նշանակվել են նոր տեսուչներ: Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեսուչ է նշանակվել Ս. Գեղարդ վանքի նախկին վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, իսկ Սևանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ աբեղա Գալստյանը:

Տ. ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ. Եղիշե ավագ քին. Սարգսյանը (ավազանի անունով՝ Սարգիս) ծնվել է 1929 թ. մայիսի 26-ին Էջմիածին քաղաքում:

1935-1945 թթ. սովորել է Էջմիածնի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1945-1951 թթ. սովորել և ավարտել է Սուրբ Էջմիածնում վերաբացված Հոգևոր Ճեմարանը՝ դառնալով նրա առաջին շրջանավարտներից մեկը:

1951 թ. սեպտեմբերի 12-ին ձեռնադրվել է սարկավագ:

1951-1952 թթ. սովորել է Զագորսկի հոգևոր ակադեմիայում: Վերադառնալով Մայր Աթոռ՝ պաշտոնավարել է Մայր Տաճարում որպես լուսարարապետի օգնական:

1954 թ. ձեռնադրվել է քահանա, որից հետո պաշտոնավարել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տարբեր թեմերում՝ կատարելով վարչական աշխատանքներ: Այդ ընթացքում ընդունվել և ավարտել է նաև Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի հեռակա բաժինը: Աշխատակցել է Մատենադարանում:

1978 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Ս. Գեղարդ վանքի վանահայր: Միաժամանակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճեմարանում դասավանդել է Հայ Եկեղեցու պատմություն առարկան:

2000 թ. օգոստոսի 1-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ազատվել է վանահոր պարտականություններից և նշանակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ: